ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 10

ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԵԼՈՒ ԳՈՐԾԸՆԹԱՑՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

Գ. Փամբակ 24 հոկտեմբերի, 2025թ. Ժամը՝ 15.00

Փամբակ համայնքում սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական աջակցություն ցուցաբերելու գործընթացն ապահովող մշտական հանձնաժողովի թիվ 10 նիստին մասնակցում են՝

Հանձանժողովի նախագահ՝ Ս" Ուլիխանյան

Նախագահի տեղակալ՝ Ս. Անանյան

Քարտուղար՝ Ն. Ժամհարյան

Անդամներ՝ Ս. Հակոբյան

Ռ" Մինասյան

Կ. Շերմազանյան

Գ. Կարապետյան

Շ. Հակոբյան

Նիստին մասնակցում է Հանձնաժողովի 8 անդամ:

Նիստն ընթանում է Հանձնաժողովի անդամ Ա. Օհանյանի /ծննդաբերական արձակուրդ/, Ա. Սարգսյանի /հարգելի/ և Ա" Ռամազյանի /հարգելի բացակայությամբ:

Նիստի օրակարգը

1. **Քանաքար Արտուշի Սուքիասյանի դիմումը՝ սոցիալական աջակցություն տրամադրելու մասին:**
2. **Մանվել Մելսիկի Աբազյանի դիմումը՝ սոցիալական աջակցություն տրամադրելու մասին:**

Նիստի ընթացքը

Օրակարգի թիվ 1 հարց՝ Քանաքար Արտուշի Սուքիասյանի դիմումը՝ սոցիալական աջակցություն տրամադրելու մասին

Փամբակ համայնքում սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական աջակցություն ցուցաբերելու գործընթացն ապահովող մշտական հանձնաժողովի 24 հոկտեմբերի 2025 թվականի թիվ 10 նիստում օրակարգի առաջին հարցով քննվում է Փամբակ համայնքի Փամբակ բնակավայրի բնակիչ Քանաքար Արտուշի Սուքիասյանի /ծնված՝ 06.03.1955թ., հաշվառման վայրը՝ Փամբակ բն., 45 շենք, 1-ին բնակարան/ դիմումը՝ սոցիալական աջակցություն տրամադրելու մասին:

Դիմումին կցված է դիմումատուի նույնականացման քարտի պատճեն: Տեղեկանք ընտանիքի կազմի և բնակության վայրի մասին, առողջական վիճակը հավաստող փաստաթղթերի պատճենները, Էպիկրիզ հ/պ 4916/297:

Հանձնաժողովի ուսումնասիրությանն է հանձնվել դիմումատուի կողմից ներկայացված փաստաթղթային փաթեթը և 2025 թվականի հոկտեմբերի 14-ին կազմված կարիքների գնահատման ձևաթուղթը:

Նշված հասցեում համատեղ բնակվում են Կ. Խաչատրյանը և կինը՝ Ք. Սուքիասյանը: Կ. Խաչատրյանը և կինը կենսաթոշակառու են: Կ. Խաչատրյանի մոտ առկա են լուրջ առողջական խնդիրներ՝ շաքարային դիաբետ, սրտի անբավարարություն: Ստանում են համապատասխանաբար 33.000 և 27.000 դրամ թոշակ, որը չի բավարարում ընտանիքի առօրյա հոգսերը հոգալուն:Եկամուտը

բավարարում է միայն դեղորայքի ձեռք երմանը, ուստի ընտանիքը դժվարանում է սնունդ ձեռք բերել:

Փաստաթղթային փաթեթի ուսումնասիրության ավարտին Հանձնաժողովի քարտուղարը ներկայացրեց կարիքի գնահատման արդյունքները և ընտանիքի սոցիալական պատմությունը:

Համաձայն Փամբակ բնակավայրի վարչական ղեկավարի 15 հոկտեմբերի 2025 թվականի թիվ 2863 տեղեկաքի, Քանաքարա Սուքիասյանը բնակվում է Փամբակ բնակավայր, 4 փողոց, 45 շենք 1 բնակարան հասցեում:

Ընտանիքի զբաղեցրած բնակարանը երկու սենյականոց է՝ վերանորոգված չէ: Խոնավ է, պատերը և հատակը վնասված: Ջեռուցվում է փայտի վառարանով: Գազաֆիկացված չէ, առկա է էլեկտրաէներգիա: Ջուրը բերում են դրսից: : Խոհանոցը կիսաքանդ է, շահագործման համար բավարար չէ:

Կոմունալ-կենցաղային հարմարությունները և սանիտարահիգիենիկ պայմանները բավարար չեն: Ջուրը բերում են դրսից: Լոգարան չկա, սանհանգույցը գտնվում է դրսում:

Ընտանիքը կարիքի գնահատման արդյուքնում հատել է սոցիալական աջակցությունների տրամադրման նվազագույն շեմը՝ հավաքելով 5 միավոր:

Հիմք ընդունելով ընտանիքի սոցիալական վիճակը, կարևորելով անձի կյանքի և առողջության պահպանման իրավունքը և կարիքի գնահատման արդունքները, Հանձնաժողովի քարտուղարն առաջարկեց դիմումատուի պահանջը սոցիալական աջակցության մասին բավարարել և տրամադրել սոցիալական աջակցություն՝ 20"000 դրամ արժողությամբ սննդի փաթեթի ձեռքբերման 2 քարտի տեսքով, ինչը Հանձնաժողովի անդամների կողմից ընդունվեց միաձայն:

Տրամադրված աջակցությունը չի կարող գերազանցել 20"000 դրամի սահմանաչափը, սակայն կարող է իրացվել պակասորդով:

Օրակարգի թիվ 2 հարցը՝ Մանվել Մելսիկի Աբազյանի դիմումը՝ սոցիալական աջակցություն տրամադրելու մասին

Փամբակ համայնքում սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական աջակցություն ցուցաբերելու գործընթացն ապահովող մշտական հանձնաժողովի 24 հոկտեմբերի 2025 թվականի թիվ 10 նիստում օրակարգի երկրորդ հարցով քննվում է Փամբակ համայնքի Լեռնապատ բնակավայրի 9 փողոց,1 տուն հասցեի բնակիչ Մանվել Մելսիկի Աբազյանի /ծնված՝ 21.08.1983թ., հաշվառման վայրը՝ Լեռնապատ բնակավայր, 9-րդ փողոց, 1 տուն հասցեի դիմումը՝ սոցիալական աջակցություն տրամադրելու մասին:

Դիմումին կցված է դիմումատուի անձը հաստատող փաստաթղթի և հանրային ծառայությունների համարանիշի հատկացնելու մասին տեղեկանքի պատճեն: Լեռնապատ բնակավայրի վարչական խեկավարի 25 սեպտեմբերի 2025թ"թիվ 2697 տեղեկանք, էպիկրիզ թիվ 10300/1288 պատճեն:

Հանձնաժողովի ուսումնասիրությանն է հանձնվել դիմումատուի կողմից ներկայացված փաստաթղթային փաթեթը և 2025 թվականի հոկտեմբերի 01-ին կազմված կարիքների գնահատման ձևաթուղթը:

Համաձայն Լեռնապատ բնակավայրի վարչական ղեկավարի 25 սեպտեմբերի 2025 թվականի N 2697 տեղեկանքի՝ նշված հասցեում Մանվել Աբազյանը բնակվում է կնոջ և դստեր հետ :

Համաձայն ՎԲԿ 28 օգոստոսի 2025թ. թիվ 10300/1288 պիկրիզի. Մանվել Աբազյանին կատարել են կրծքավանդակի օրգանների ռենտգեն հետազոտություն, նկարագրվել է ձախից 7,8,9 կողերի կոտրվածքներ:

Համաձայն 2025 թվականի հոկտեմբերի 01-ի կարիքի գնահատման արդյունքների՝ Ընտանիքի զբաղեցրած տունը 2 սենյականոց է՝ խարխուլ վիճակում: Խոնավ է, ջեռուցվում է փայտի վառարանով: Կահույքը հին է, սակայն գտնվում է բարվոք վիճակում, ենթակա է շահագործման: Հյուրասենյակում առկա է սպասքի պահարան, հեռուստացույց, սեղան, աթոռներ: Ննջասենյակում առկա է մահճակալ, հին զգեստապահարան: Մաքուր է և կոկիկ:Սենյակներից մեկը ծառայում է և որպես խոհանոց, որպես հյուրասենյակ և որպես ննջասենյակ:Տունը զուրկ է բավարար կոմունալ-կենցաղային հարմարություններից և սանիտարահիգիենիկ պայմաններից:

Գազաֆիկացված է. առկա է էլեկտրաէներգիա, ջրամատակարարումը գտնվում է դրսում: Լոգարան չկա. սանհանգույցը գտնվում է դրսում:

Ընտանիքի հիմնական եկամուտը 25.000դրամ նպաստն է:

Ընտանիքը կարիքների գնահատման արդյունքում հատել է սոցիալական աջակցությունների տրամադրման շեմը՝ հավաքելով 6 միավոր:

Հիմք ընդունելով ընտանիքի սոցիալական վիճակը, կարևորելով անձի կյանքի և առողջության պահպանման իրավունքը և կարիքի գնահատման արդունքները, Հանձնաժողովի քարտուղարն առաջարկեց դիմումատուի պահանջը սոցիալական աջակցության մասին բավարարել և տրամադրել սոցիալական աջակցություն՝ 20.000 դրամ արժողությամբ սննդի փաթեթի ձեռքբերման 2 քարտի տեսքով, ինչը Հանձնաժողովի անդամների կողմից ընդունվեց միաձայն:

Տրամադրված աջակցությունը չի կարող գերազանցել 20.000 դրամի սահմանաչափը, սակայն կարող է իրացվել պակասորդով:

Հանձնաժողովի իրավական և փաստական հիմնավորումները

Ղեկավարվելով 07 մայիսի 2002 թվականի «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 11-դ կետի 1-ին ենթակետով. Փամբակ համայնքի ավագանու 13 փետրվարի 2025 «Փամբակ համայնքի ավագանու 06 ապրիլի 2022 թվականի N 32-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու և ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը սահմանելու մասին» թիվ 004-Ա և 13 փետրվարի 2025 թվականի «Փամբակ համայնքի ավագանու 2023 թվականի նոյեմբերի 14-ի N 129-Լ որոշումն ուժը կորցրած ճանաչելու և Փամբակ համայնքում սոցիալական աջակցության ծառայությունների տրամադրման չափորոշիչները սահմանելու մասին» թիվ 005-Ա որոշումներով, Փամբակ համայնքում սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական աջակցություն ցուցաբերելու գործընթացն ապահովող մշտական հանձնաժողովի կանոնադրությամբ, հիմք ընունելով բնակիչների դիմումները, կատարված ուսումնասիրության արդյունքները, Հանձնաժողովը բաց քվեարկությամբ, միաձայն.

ՈՐՈՇՈՒՄ Է.

1. **Քանաքարա Արտուշի Սուքիասյանի** պահանջը սոցիալական աջակցության մասին բավարարել և տրամադրել սոցիալական աջակցություն՝ ընդհանուր 20.000 դրամ արժողությամբ սննդի փաթեթի ձեռքբերման 2 քարտի տեսքով:
2. **Մանվել Մելսիկի Աբազյանի** պահանջը սոցիալական աջակցության մասին բավարարել և տրամադրել սոցիալական աջակցություն՝ ընդհանուր 20.000 դրամ արժողությամբ սննդի փաթեթի ձեռքբերման 2 քարտի տեսքով:

Հանձնաժողովի նախագահ՝ Ս" Ուլիխանյան

Նախագահի տեղակալ՝ Ս. Անանյան

Քարտուղար՝ Ն. Ժամհարյան

Անդամներ՝ Ս. Հակոբյան

Ռ" Մինասյան

Կ. Շերմազանյան

Գ. Կարապետյան

Շ. Հակոբյան